ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 03/19

17.01.2019թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)**,

քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (նախագահող դատավոր՝ Ա. Մնացականյան) (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան կամ դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը»:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատարանում քննվող թիվ ԵԴ/0797/06/18 քրեական գործով կիրառման ենթակա վերոնշյալ իրավական նորմերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ դատարանի դիրքորոշման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1 հոդվածի 8-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2 հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունից բխում է, որ անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդության քննության արդյունքում դատարանի կողմից կայացված որոշումներից վերաքննության կարգով կարող է բողոքարկվել միայն մեկը՝ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին որոշումը: Ինչ վերաբերում է դատախազի միջնորդությունը մերժելու մասին որոշմանը, ապա այն վերաքննության կարգով չի կարող բողոքարկվել, քանի որ բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ

հոդվածներում, այնպես էլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածում:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերը նշված իրավակարգավորումների արդյունքում.

ա) խախտվում են արդար դատաքննության բաղադրիչ հանդիսացող մրցակցության և զենքերի հավասարության սկզբունքները, քանի որ ի տարբերություն օտարերկրյա պետությունում հանցանք կատարած անձի և նրա պաշտպանի՝ դատախազը զրկվում է առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից: Ընդ որում, վերաքննիչ դատարանի գնահատմամբ դատախազի համար նման սահմանափակում նախատեսելն անհրաժեշտ չէ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակի հասնելու համար և չի հանդիսանում անձի որևէ հիմնական իրավունքի կամ ազատության ապահովման համարժեք միջոց,

բ) վտանգում է Հայաստանի Հանրապետության կողմից իր կոնվենցիոն պատրավորությունների կատարումը, քանի որ առաջին ատյանի դատարանի թույլ տված դատական սխալի արդյունքում ժամանակավոր կալանավորման հիմքերի առկայության պայմաններում հանձնման ենթակա անձը կարող է հայտնվել ազատության մեջ,

գ) դատախազությունը զրկվում է անձի իրավական վիճակի վրա էապես ազդող, ինչպես նաև պետության կոնվենցիոն պարտավորությունների կատարմանն ուղղված դատական ակտը բողոքարկելու իր սահմանադրական լիազորությունը լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Ըստ վարչական դատարանի՝ վերոգրյալ եզրահանգումներն իրենց համակցության մեջ վկայում են այն մասին, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը դատախազի կողմից վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելու պայմաններում մասնավոր շահը չարդարացված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ՝ այդպիսով խախտելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վերոգրյալից ելնելով՝ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ և 176-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի հունվարի 22-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող քրեադատավարական իրավակարգավորումների բովանդակությունը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հետևյալն է.

Հոդված 376.1. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

Հոդված 478.2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ժամանակավոր կալանավորման կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է ժամանակավոր կալանավորում մինչև 40 օր ժամկետով կամ միջազգային պայմանագրով նախատեսված այլ ժամկետով՝ հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով: Եթե հանձնելու վերաբերյալ միջնորդությունը չի ստացվել ժամանակավոր կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետի ընթացքում, կամ Հայաստանի Հանրապետության դատարանը մերժել է հանձնելու համար կալանավորում կիրառելու միջնորդությունը, կամ պարզվել են հանձնումը

բացառող հանգամանքները, ապա անձը ենթակա է ազատման: Հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ժամանակին չներկայացնելու հիմքով անձին ժամանակավոր կալանավորումից ազատելը չի խոչընդոտում հետագայում նրա նկատմամբ հանձնելու համար կալանավորման կիրառմանը:

2. Մինչև անձին հանձնելու վերաբերյալ միջնորդություն ստանալը օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը կարող է հանձնվել փոստով, այդ թվում՝ էլեկտրոնային կամ հեռագրով կամ տեխնիկական այլ միջոցներով, ինչպես նաև Միջազգային քրեական ոստիկանության (Ինտերպոլի) կամ անձի հետախուզում իրականացնող այլ միջազգային կազմակերպության միջոցով, որի մասնակից է Հայաստանի Հանրապետությունը:

3. Դատախազն անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է ձերբակալման վայրի դատարան: Միջնորդությանը կցվում են ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ որոշումը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերից մեկը և ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերը:

4. Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով դատախազին, ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին կամ միջնորդությունը մերժելու մասին: Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Միջնորդության քննարկման արդյունքների մասին դատախազը, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, անհապաղ տեղյակ է պահում օտարերկրյա պետության իրավասու մարմնին:

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով, որոնց բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը սույն գործով չի առաջանում, քանի որ կենտրոնի դիրքորոշմամբ՝ խնդիրը պետք է քննարկել իրավակարգավորման բացի շրջանակներում:

Այդ կապակցությամբ հարկ է մեջբերել դատախազի լիազորությունների վերաբեյալ սահմանադրական նորմում ամրագրված դրույթը՝ համաձայն որի.

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդված.

1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Նշված սահմանադրական նորմը նախատեսել է դատական ակտերի բողոքարկման լիազորությունը միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն էլ, ելնելով սահմանադրական կարգավորումից, 376.1-րդ և 478-րդ հոդվածներում սահմանել է նշված դրույթներում սահմանված դատական ակտերի բողոքարկան դեպքերն ու կարգը:

Ինչպես արդեն նշել ենք, սույն գործով քննարկվող հարցի իրավակարգավորման առերևույթ ոչ լիարժեքությունն անհրաժեշտ է դիտարկել և գնահատել իրավունքի բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումների համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով **իրավունքի բացի** հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է *«Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ* ***նորմատիվ պատվիրանի բացակայությամբ,*** *ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում*

հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ *օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:*

Սահմանադրական դատարանն իր՝ 2014թ. ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշման մեջ նշել է. *«…Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի և իրավական եզրույթների սահմանումների օրենսդրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը…»:*

Սահմանադրական դատարանը 14 դեկտեմբերի 2012թ. թիվ ՍԴՈ-1061 որոշմամբ գտել է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված և համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Իր 12.06.2012թ. թիվ ՍԴՈ-1255 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է.

«6. Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի հնարավոր հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները գլխավորապես հանգում են օրենսդրական կարգավորումների ենթադրաբար ոչ լիարժեք լինելու խնդրին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ

սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է սկզբունքային նշանակություն ունեցող հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «…Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»,

բ) «… բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ստորագրություն չհեռանալու վերաբերյալ խափանման միջոցը վերացնելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկման հարաբերությունների իրավակարգավորման բացակայությունը չի կարող դիտարկվել որպես օրենքի բաց կամ իրավական անորոշություն, այլ դա օրենսդրի հայեցողության շրջանակներում իրականացված իրավակարգավորում է:

Սահմանադրական դատարանը նաև ընդունում է ի գիտություն, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի պահանջներին համապատասխան՝ արգելվում է Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքը, եթե օրենքով սահմանված կարգով հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև միջազգային իրավունքի ակտերով ընդունված այն սկզբունքը, որ իրավախախտի նկատմամբ ազատազրկման հետ չկապված խափանման միջոցի կիրառումը պահանջում է նրա համաձայնությունը (ՄԱԿ-ի ԳԱ 14 դեկտեմբերի 1990թ. 45/110 բանաձևի 3.4 կետ): Ստորագրությունը՝ չհեռանալու մասին, անձի կամաարտահայտության դրսևորում է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ, ըստ գործի նյութերի, դիմողի նկատմամբ՝ ամբաստանյալի կարգավիճակով, դատաքննությունը շարունակվում է, որի շրջանակներում խափանման միջոցի ընտրության հետ կապված հարցն ակնհայտ անհիմն ձևով է ներկայացվել որպես սահմանադրաիրավական վեճ, և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով դիմումը ենթակա է մերժման: Քննության առարկա դիմումը չի համապատասխանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում առկա վեճի առնչությամբ կիրառելի են նաև սահմանադրական դատարանի ՍԴՈ-922 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, սահմանադրական դատարանը գտել է, որ՝ «... օրենսդրի նման մոտեցումն իր հերթին բխում է այն ողջամիտ տրամաբանությունից, որ հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող խնդիրը, այն է՝ ժամանակավոր կալանավորում կիրառելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը դատախազի կողմից վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելը, ուղղակիորեն և հստակ նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածներով, որի իրավական որոշակիությունը կասկած չի հարուցում:

Այս իրավիճակի նկատմամբ լիարժեքորեն համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի վերևում մեջբերված դիրքորոշումներն առ այն, որ այս պարագայում իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Գտնում ենք, որ առկա հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ այն հանգամանքով, որ օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չեն: Առկա վիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում:

Բացի այդ, քննարկվող գործի վարույթը դեռևս չի ավարտվել և վարույթի շրջանակներում կայացված առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտը՝ ժամանակավոր կալանավորում կիրառելը մերժելու մասին որոշումը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող է վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- **ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների ՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը» որոշելու վերաբերյալ գործի վարույթն ամբողջությամբ ենթակա է կարճման առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան